

Մ. Իսրայելյան

ԱՐԻՆԲԵՐԴԻ ՏՍԻ ՏԱՃԱՐԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արինբերդը (Ղանլիթափան) վաղուց արդեն հայտնի է որպես ուրարտական հուշարձան: Դեռևս 1894 թ. ուսու հնագետ Ա. Իվանովսկին Ռուսահայաստանի ուրարտական հուշարձանները հետազոտելիս այցելեց և Արինբերդ, ուր և ձևաք բերեց 1879 թ. այդտեղից գտնված սեպագիր արձանագրությունը¹, բայց բոլորը սխառնամասիկ պեղումների օրվելու դարձավ միայն վերջերս:

1951 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմություն ինստիտուտը նախաձեռնեց Արինբերդի պեղումները, սկզբում նեղ մասշտաբով, քանի որ արշավախումբը հանդես եկավ որպես Կարմիր-բլուրի արշավախմբի ֆիլիալ:

1952 թ. այդ պեղումներին մասնակից դարձավ Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանը՝ հանձինս իր երկու աշխատակցի:

Այդ տարվանից սկսած պեղումները կատարվել են հիմնականում երկու տեղամասում, երկու ջոկատով:

Պատմության ինստիտուտի ջոկատը այդ ընթացքում մաքրել է՝ սյունադարձ մեծ տաճարի՝ դեպի հյուսիս և արևելք նայող արտաքին պատերը (1951 թ. արդեն բացված էր արևմտյան պատը), տաճարի երկու մուտքերը, նրանց հարող որոշ տարածություններ, մասնակցել է տաճարի ներսի մաքրման աշխատանքներին՝ որը տեղի է 1951 թ. մինչև 1954 թ., ինչպես և պարզել է տաճարի յուրաքանչյուր սյան տրամագիծը, որ հավասար է 43 սմ-ի:

1956 թ. ինստիտուտը ավելի լայն հնարավորություններով սկսեց իր աշխատանքը՝ սյունադարձ տաճարին հյուսիսից հարող տարածության վրա. պեղումները սկսվեցին հուլիսի 10-ին և տեղեցին մինչև սեպտեմբերի մեկը:

Հենց սկզբից, պեղման 3—4-րդ օրը պարզվեց, որ մենք զործ ունենք երկու տարբեր շենքերի հանդիպակած պատերի հետ. զբաղվեցինք առաջին շենքով, որի մաքրումը բացեց մի մեծ սենյակ՝ հինգ մուտքով. առաջին մուտքը տանում է փոքր սենյակը, որը, թեև միջնորմով անջատված է օտարացած չորս մուտք ունեցող մեծ տարածությունից, բայց, միաժամանակ, առանձին մուտքով միացած է նրա հետ: Այս շենքի նշանակությունը մեզ համար դեռևս փնտռելի է անորոշ, մանավանդ որ որոշ հանգամանքներից ստիպված հիշյալ շենքի մաքրումը ֆուգանկատար: Այդտեղից ստացված հիմնական հնագիտական նյութը խեցեղենն է, որի մեջ բավական մեծ թիվ է կազմում, բացի զուտ ուրարտականից, տեղական՝ խոշորահատիկ կավից պատրաստած կոպիտ կերամիկան, հաճախ իրեն բնորոշ նախշերով:

Պետք է ասել, որ Արինբերդի կերամիկան առանձին հետաքրքրություն է ներկայացնում ո՛չ այնքան Կարմիր-բլուրի խեցեղենի հետ ունեցած իր

¹ Քարը այժմ գտնվում է Մոսկվայի Պատմական թանգարանում (տե՛ս՝ Вестник Древней истории, 1953, № 3, արձ. 139; Այսուհետև՝ ВДИ).

ընդհանրություններով, որքան՝ տարբերիչ գծերով, սակայն այս հարցը տվյալ հոդվածի նպատակից դուրս է:

Անուամենայնիվ նշենք, որ Արինքերդի խեցեղենում, թեև սակավաթիվ, բայց առանձին խումբ են կազմում կարմիր փայլեցրած ֆիալա կոչվող թասի կավե բեկորները. նման թասեր, բայց մետաղից, հանդիպել են շատ տեղերում, այդ թվում նաև՝ Հայաստանի գանադան վայրերում:

Ողջոր գիտական արժեք է ներկայացնում նույն 1956 թվականի մեր պեղումներով բացած երկրորդ շենքը:

Օգոստոսի 11-ին, երկրորդ շենքի արևելյան պատի անկյունաքարից հաշված՝ հինգերորդ քարի վրա, օրվա վերջում բացվեց սեպագիր արձանագրություն: Շենքի չնայած մաքրումը պարզեց հետևյալը. մենք դարերի անհայտությունից վեր էինք հանել ուրարտական տեքստերում հաճախ հիշատակվող SUSI կոչվող կառուցվածքը. մի գողտրիկ շենք՝ 40 քառ. մետր տարածությամբ (5X8 մետրով), որի միակ և հոյակապ մուտքի առև ձախ կողմերում, ճակատի կողմից, գտնվեցին մեկական, տառադի միենթւն բովանդակությամբ, նման չափերով ու փորագրությամբ սեպագիր արձանագրություններ¹:

Նախքան բուն նյութին անցնելը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Արինքերդի հնագիտական նյութի ճշշող մասը, բացառությամբ խեցեղենի ու ոսկրեղենի, հայտնաբերվել է SUSI-ի ներսից, մասամբ էլ նրա արտաքին շրջապատից. այսպես, օրինակ՝ հայտնաբերված են տարբեր նյութից, տարբեր դրանի ու ձևի ուլունքներ, որոնք հատուկ ուսումնասիրության նյութ են կազմում և որոնց զգալի մասը, մեր կարծիքով, տարբերվում է Կարմիրբլուրի ուլունքներից ու մի փոքր ավելի ուշ ժամանակի է պատկանում: Գտնվել են որմնանկարների բեկորներ, բավականաչափ մետաղե իրեր՝ բրոնզե ու երկաթե սլաքներ (նետի ծալքեր), շուրջ 90 հատ, մեծ մասամբ եռաթև, զինահանդերձի բրոնզե կոճակներ, քրոջներ, սպարանջաններ, մատանիներ, ասեղներ և այլն:

SUSI-ից ու սեպագիր արձանագրություններից ոչ պակաս գիտական կարևորագույն արժեք են ներկայացնում, SUSI-ի ներսից, վերահիշյալ նյութերի հետ մեկտեղ գտնված երկու արձաթև մանր դրամներ:


Մեր նախնական ուսումնասիրությունից պարզվեց, որ դրամները ծագում են, ըստ երևույթին, Փոքր Ասիայից. հատկապես տիպական նմանություն ունեն միլեթյան դրամների հետ և պատկանում են մ. թ. ա. 5-րդ դարին:

Կարևոր է ընդգծել, որ հնագիտական նյութը գլխավորապես գտնվել է SUSI-ի ներսում՝ մուտքի հանդիպակած պատին կից ինչ-որ կառուցվածքի հիմնաքարերի մոտ, որը, մեր ենթադրությամբ հանդիսանում է նվիրատվության սեղանի հետքը:

¹ Արձանագրված և մուտքը կաղնի սրբատաշ այդ քարերը, ըստ Արսեն Ասնանդյանի, բազալտի մի տեսակն են, որից Հայաստանում գտնվում է միայն երկու տեղ՝ Կիրովականում և Թոխմախան-գյուղում (Նրեան). սլաք է, որ Արինքերդի այդ քարերը տարվել են Թոխմախան-գյուղից:

² Թերևս պատահական չէ, որ SUSI-ի ներսում ոսկորի ու խեցու որևէ բեկոր չի գտնվել, որը և հիմք է տալիս մեզ ենթադրելու, թե այդ մեկ մուտք ունեցող, ներսից ու դրսից օրմնանկարներով ծածկված փոքր ու փակ շենքում, ըստ երևույթին, կենդանական զոհաբերումներ չեն կատարվել և ուրեմն հիմնաքարերը ավելի նվիրատվության սեղանի հետք են, քան՝ զոհասեղանի:

Ինչպես արդեն ասացինք, այս տարվա մեր կարևոր հայտնագործությունը եղավ SUSI կոչվող ուրարտական կառուցվածքը իր հոյակապ մուտքի նույնանման արձանագրություններով (տե՛ս նկար 1 և 2). ստորև բերվող մեր դիտողությունները հավասարապես վերաբերում են երկու արձանագրություններին, առանձին-առանձին վերցրած:




Նկ. 1.

Տեքստը փորագրված է 96 սմ երկարությամբ քարի վրա, աջ և ձախ կողմերից հաշված՝ ուղիղ կենտրոնում. քարի բարձրությունն է 53 սմ:

Տեքստը բաղկացած է յոթ տողից (տողի երկարությունը՝ 79 սմ). տողատված է և աջ ու ձախ կողմերից սահմանազմված. ինչպես սովորաբար հանդիպում է ուրարտական գրություն մեջ: Տեքստի ընդհանուր բարձրությունն է 22 սմ: Բովանդակությունը հետևյալն է՝

1. ^Dy-u-ar¹-sa-a i-ni ~su-u-si-e
2. ¹Ar-gi-iš-ti-i-se ¹Me-nu-a-ḫi-ni-se
3. šì-di-ls-tu-ni ¹Ar-gi-iš-ti-se a-li
4. qì-u-ra-a-ni qu-ul-di-i-ni ma-a-nu
5. ú-i gi-e-i iš-ti-ni si-da-u-ri-e
6. ¹Ar-gi-iš-ti-ni LUGA'L DAN. NU LUGA'L al-su-i-ni
7. LUGA'L ^{KUR}Bi-a-i-na-u-e a-lu-si ^{URU}Tu-us-pa URU

¹ Ա. Դիակունովը առաջարկում է նման դեպքերում -ub- ընթերցումը, այդ դեպքում կստացվի՝ Իուբշա աստվածանունը, որը նույնպես չի հանդիպում ուրարտական պանթեոնում:



Նկ. 2.

Տեքստի մեր թարգմանությունը կլինի այսպես.

1. Աստված Իուարշալին¹ այս տուն SUSI-ն (տաճարը)
2. Արգիշտին, Մենուայի որդին
3. կառուցեց: Արգիշտին ասում է՝
4. հողը ամայի էր,
5. ոչինչ այնտեղ չկար կառուցված²(?):
6. Արգիշտին քաղալոր (է) հղոր, քաղալոր՝ մեծ,
7. քաղալոր՝ երկիր Բիաջնայի, տերը՝ Տուշպա քաղաքի:

Այս արձանագրությունը, որ առաջին հայացքից թվում է ծանոթ, բովանդակությունով փաղուց հայտնի, պարունակում է մի շարք կարևոր նորություններ:

Ամենից առաջ՝ նոր է Իուարշա (կամ՝ Իուրշա) աստվածանունը, որը ուրարտական տեքստերում մինչ այդ չի հանդիպել. երկրորդ՝ SUSI-ն հանդես է գալիս տուն գաղափարագրի հետ, որ այս դեպքում, մեր կարծիքով պետք է բժրոհել որպես որոշիչ (դետերմինատիվ), եթե քարը գտնվեր ոչ իր տեղում, այնուամենայնիվ տուն գաղափարագիրը կօգներ մեզ ասելու, որ SUSI-ն հղվել է ծածկված շենք և ոչ որևէ այլ կառուցվածք:

¹ Տե՛ս նախորդ էջ, ծանոթությունն առաջին:

² Չորրորդ և հինգերորդ տողերը կաղմող կապակցությունը, որ հաճախ հանդիպում է և այլ տեքստերում, մասնագիտական դրականության մեջ այդպես է թարգմանվում. ելակետն է Ա. Խյուտցեհ և-ի ուրարտական բառի մեկնաբանումը, որպես ժխտական իմաստ պարունակող բառի: Մենք այդ թարգմանությունը նշում ենք վերապահությամբ:

Երրորդ կարևոր նորութիւնն այն է, որ Արգիշտի Ա.-ի տեքստերում SUSI-ն հանդիպում է տուաջին անգամ:

Ուրարտական մինչ այդ եղած տեքստերի ուսումնասիրութիւնից պարզվել է, որ SUSI-ներ կառուցել են միայն Իշպուինը և Մենուան և այդ SUSI-ները առանց բացառութեան ձոնվել են ուրարտացոց գլխավոր աստված Խալդուն (տե՛ս ВДИ, №№ 18, 25, 27, 71, 72, 73)¹, Այս հանգամանքը հիմք է տալիս մեզ մտածելու, որ Իուարշուն հաւանաբար եղել է ուրարտական պետութեան մեջ մտնող որեւէ ցեղի գլխավոր աստվածը, որին ինչ-ինչ առիթով նվիրում է Արգիշտին Արինքերդում կառուցած իր SUSI-ն:

Թե ո՞րն է եղել Իուարշա կամ Իուրշա աստծու էութիւնը, առայժմ դժվար է ասել. մեր պրպտութիւնները այդ ուղղութեամբ դեռ և՛ հնարավորութիւն չեն տալիս որեւէ որոշակի խոսք ասելու, թե՛, թվում է, թե հետքը գտել ենք². համենայն դեպս, ինչպէս տեսնում ենք, տվյալ դեպքում նա փոխարինում է Խալդ աստծուն. հետեւաբար, երևի մոտավորապէս հենց նույն դերն էլ կատարել է, ինչ Խալդ աստվածը:

Այժմ անցնենք այն հարցին, թե ինչ բովանդակութիւն ունի SUSI կոչվող շէնքը: Այն կարևոր ու գրեթե եզակի հանգամանքը, որ արձանագրութիւնը գտնվում է իր սկզբնական տեղում, հենց SUSI կառուցվածքում, օգնում է մեզ անհամեմատ որոշակի ասելու, թե այն ինչ նպատակի է ծառայել:


Susi-ն, ինչպէս տեսանք, հոյակապ, բայց ոչ շատ մեծ մի սենյակ է (40 քառ. մետր), սրբատաշ քարերով շարված, հանդիսավոր մուտքով և որմնազարդ պատերով. ներսում՝ մուտքին զուգահեռ, պատի մոտ եղած չնվիրատվութեան սեղանով (տե՛ս նկ. 3): Պետք է ենթադրել, որ առհասարակ ուրարտական SUSI-ները հիմնականում նույն տեսքն են ունեցել և նույն նպատակին են ծառայել:

Մեր այս շէնքի ծավալը, հատկապէս ուրարտական գլխավոր աստված Խալդուն նվիրվելը և այն, որ SUSI-ն այլ կառուցումների հետ հիշատակվելիս տեքստերում միշտ առաջնակարգ տեղ է գրավում (տե՛ս ВДИ, №№ 18, 71, 72, 73), մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ SUSI-ն փոքր չափի, հատուկ խնամքով կառուցվող մի ուղղանկյուն տաճար է, որը նվիրվել է մեկ, այն էլ ամենազոր աստծուն և ուր, հաւանաբար այցելել ու ծիսակատարութիւններ են եատարել իշխողները, այլ կերպ ասած՝ թերեւս այն եղել է արքայական տաճար (տե՛ս նկ. 4):


Susi-ները զգալի կերպով տարբերվել են մասսայական բնույթի աղոթաւայրերից, որի տիպական օրինակը, ըստ երևույթին, պետք է համարել նույն Արինքերդի պեղումներով բացած հսկայական մեծութեամբ սյունազարդ

¹ Հենց այս հանգամանքը իրավունք է տվել մասնագետներին աներկբա SUSI-ն պաշտամունքային կառուցվածք համարելու, թե՛ ինչ տիպի կառուցվածք լինելը ոչ ոքի հայտնի չէր:

² Խուրի-միտանյան պետութեան մայրաքաղաք Նուգիի սեպագիր տեքստերում հիշատակվող անձնանունների մեջ հանգիպում են և՛ Y-u'-ar-sa-ին մոտ անուններ, և՛ Y-u'-ub-sa-ին, ինչպէս՝ u'-ar-sa, u'-ar-si-a, wa-ar-si-ia կամ՝ u'-ap-se, yr-sa-a և այլն. մենք շարունակում ենք մեր պրպտութիւնները այդ ուղղութեամբ և հույս ունենք հանգելու որոշակի եզրակացութեան:



Նկ. 3.



Նկ. 4.

տաճարը¹, իր զոհասեղանով, երկու մուտքերով ու պատերի տակ եղած նըստարաններով:

Այլևորդ չենք համարում նշել, որ եթե կրկնակ տեքստերը չհաշվենք, SUSI-ն ուրարտական դրութեան մեջ հանդիպում է յոթ անգամ, գլխավորապես SUSI-ների կառուցման աստիճ. յոթից մեկ դեպքում SUSI-ի հետ հիշատակվում են նաև իսալդյան դոները, ուր զոհարերութենք են կատարվում (ВДИ, № 18), երկու դեպքում՝ (ВДИ, № 71, 72) բերդի կառուցում, իսկ մեկ այլ դեպքում (ВДИ, № 73)՝ նշվում է՝ թե՛ իսալդյան դոների, և թե՛ բերդի կառուցում, ըստ որում, ինչպես արդեն ասացինք, SUSI-ն միշտ առաջինն է հիշատակվում. նրան հաջորդում է իսալդյան դոները, ապա միայն՝ բերդը:

Այս պատկերը երկու ենթադրութեան հիմք է տալիս. կամ SUSI-ն կառուցվել է սովորաբար մյուս կառուցումներից առաջ և տեքստում հենց այդ պատճառով էլ առաջին տեղն է հատկացվում նրան, կամ՝ այս տեղը գրավում է նա ըստ իր կարևորութեան, որպես ամենագոր առաջու տաճար՝ բերդի ներսում: Մեզ շատ ավելի հավանական է թվում երկրորդ ենթադրութեանը, մանավանդ, որ նրան հաջորդում է նույնպես պաշտամունքային նշանակութեան ունեցող իսալդյան դոներ կառուցվածքը:

Մի փոքրիկ դիտողութեան sidištu- բայի մասին. թեև մասնագետներից գրեթե ոչ մեկը այլևս չի երկմտում sidištu- բայի կառուցել թարգմանութեան մեջ, բայց և այնպես, եթե կլինեն երկմտողներ, մեր նոր արձանագրութեանները նրանց համար կառուցել թարգմանութեան ճշգրտութեանը մեկ ընդմիշտ հաստատող կարևոր կոլան կծառայեն, քանի որ նրանք շարված են գրեթե շենքի հիմքում և կազմում են շենքի մյուս քարերի ու մասերի հետ մի ներդաշնակ ամրոցութեան, կատարելով միաժամանակ համաչափ զարդարանքի դեր. պարզ է, որ այստեղ վերանորոգման մասին խոսք չի կարող լինել, և որ տեքստը sidištu- բայով հաղորդում է միայն ու միայն նոր շենքի կառուցման մասին:

Մի քանի խոսք qīurani quldini manu ui giei istini sidaurie ոչ հազվադեպ հանդիպող արտահայտութեան շուրջը. որը կազմում է մեր տեքստի 4—5 տողերը:

Այս արտահայտութեան եղած թարգմանութեանները, այդ թվում և՛ Գ. Մելիքիշվիլու, Ֆ. Քյոնիգի թարգմանութեանները ճշողը ամայի էր, ոչինչ այնտեղ չկար. կառուցվածք, մեզ մի փոքր անհավանական են թվում, եթե, իհարկե, այն սոսկ ոմ սկան արժեք չի ներկայացնում:

Մենք այդ թարգմանութեանը համոզիչ չենք համարում հետևյալ նկատառումներով. ամենից առաջ՝ երբ քննում ենք այդ արտահայտութեանը պարունակող տեքստերը, ստացվում է այն տպավորութեանը, որ Հայկական լեռնաշխարհի այն վայրերում, ուր հաստատվել են ուրարտացիք, հողը եղել է

¹ 29×33 մ., 6 կարգ սյուներով, յուրաքանչյուր կարգում՝ 5 սյուն, որոնց միայն հիմնաքարերն են մնացել տեղում:

² Համենայն դեպս Գ. Մելիքիշվիլին այն սոսկ որպես ոճական արժեք չի ըմբռնում, երբ հիմք ունենալով վերոհիշյալ դարձվածքը, գրում է՝ «Можно думать, что не случайно устраивались эти царские хозяйства на пустующих, необрабатываемых землях: царская власть, очевидно, избегала столкновения с сельскими общинами, не хотела отнимать у них земли и на них устраивать государственные хозяйства». (ВДИ, 1951, № 4, стр. 29—30).

անմշակ (sulie), անմարդարնակ (sirabae), ամայի (quldini). *մինչդեռ հնուդիտական նյութը ցույց է տալիս, որ հենց այդ վայրերում, թեև ուղ նկատի ունենանք այսօրվա՝ Սովետական Հայաստանի մեր տերիտորիան, գրեթե ամբողջ է նախաուրարտական կուլտուրական շերտը. նկատի ունենք հատկապես Արմավիրը (Արգիշտիխինիլի), ուր որոշակի հայտնի է կուլտուրական հին շերտը և ուրեմն, այն ամայի չէր կարող հանդիպել ուրարտացիներին, բայց և այնպես արմավիրյան արձանագրությունների մեջ կիրառված է վերահիշյալ դարձվածքը:*

Մյուս կողմից՝ որոշ զեպքերում quldini — ամայի տերմինին փոխարինում են՝ sirabae, sulie բառերը, որոնք թարգմանվում են՝ անմարդարնակ, անմշակ իմաստներով: Բայց եթե sulie բառը Զվարթնոցի կոթողում կարծեք թե հարմարվում է, ապա, մեր կարծիքով բոլորովին անհարիր է Քեշիշգյուլի արձանագրության տեքստում, ուր հանդիպում է հետևյալ նախադասության մեջ. ikukahini Ki^{TIM} all quldini manu ^{KUR}Biainaše balte e'a KUR. KUR^{MEs} se guni suli manu.

Եթե փորձենք suli (manu) դարձվածքը թարգմանել անմշակ բառով, ոչ մի իմաստ չի ստացվում և անշուշտ այդ է պատճառը, որ Դ. Մելիքիշվիլին հիշյալ տեղում sulie manu-ն չի թարգմանել (ВДИ, 1953, № 4, արձ. 268, տող 6—8):

Եվ վերջապես, հաղիվ թե որևէ նվաճողի, այն էլ Հին Արևելքում, զրավեին ամայի, անմարդարնակ վայրերը:

Ահա այս ամենը նկատի ունենալով, մենք միշտ վերապահություններ ենք մտնեցել այդ թարգմանությունը:

Կարելի է, իհարկե ենթադրել, որ մեզ հետաքրքրող արտահայտությունը թերևս միայն ոմական արձեք է ներկայացնում, որ ուրարտ նվաճողները կիրառել են փքուն ոճ, բայց արիներկյան, հատկապես մեր նոր տեքստերը, թվում է թե անիմաստ են դարձնում նաև այս ենթադրությունը:

Ինչպես գիտենք, 1950 թ. Արինբերդում հայտնաբերված Արգիշտու արձանագրությունը նույնպես պարունակում է հիշյալ դարձվածքը, թեև համառոտ ձևով: Այս տեքստը հաղորդում է էր(և)բուճի բերդի կառուցման մասին²: Գիտենք վաղուց, որ Արգիշտին այնտեղ կառուցել է 'ari շենքը. ուրեմն, առայժմ մեզ հայտնի տվյալներով Արգիշտի Ա Արինբերդում կառուցել է երեք շենք՝ բերդ, որի ներսում անշուշտ susi տաճարը և 'ari-ն:

¹ Մեզ բոլորովին անհիմն է թվում պրոֆ. Գ. Մելիքիշվիլու այն ենթադրությունը, թե ուրարտական թագավորները խուսափում էին և չէին ուղղում գյուղական համայնքներից հող վերցնել և այդ պատճառով էլ ամայի վայրերն էին օգտագործում պետական տնտեսության համար (ВДИ, 1951, № 4, էջ 29—30):

² Միջանկյալ ասենք, որ մենք համամիտ չենք պրոֆ. Գ. Մելիքիշվիլու այն կարծիքին, թե՛ քանի որ տարեգրության մեջ առաջ երբեք չենք հիշատակվում (ըստ Մելիքիշվիլու Իրպունի) և հետո միայն Արգիշտիխինիլին, ուրեմն վերջինը չէր կարող հիմնական կենտրոն լինել (ВДИ, 1953, № 3, էջ 112):

Մեզ ավելի հավանական է թվում, որ Արգիշտին Մենուայի դժած ուղիով, Գաշրու-ռունի մոտից, Արարսի հովտով անցնելով նրա ձախ ափը և այդտեղից Հրազդանի հովտով՝ մտնել Արինբերդ (Երևան) ու Սևանի ավազանը. այսօր էլ Սևանի մոտեցող համար ուրիշ ճանապարհ չունենք: Բնական է, որ Արարատյան դաշտը նվաճելուց հետո, Արգիշտին նախ՝ պետք է ռազմականորեն բռն թե շատ ապահովել նվաճած տերիտորիան, ապա միայն

Դժվար է պատկերացնել, այն ժամանակի տեխնիկայի պայմաններում, որ Արգիշտին այս երեք կարևոր շենքերը կառուցած լինի միևնույն ժամկետում. հավանաբար դրանք կառուցվել են հաջորդաբար և ուրեմն, չէր կարող մեկ շենքի առկայության դեպքում, մյուսի առթիվ տեքստը հաղորդել տեղի ամայության մասին:

Այսպիսով, մենք գտնում ենք՝ qīurani qulđini manu ui glei istini sīdaurīe արտահայտության թարգմանությունը՝ «Հողը ամայի էր, ոչինչ այնտեղ չկար կառուցված», մի փոքր կասկածելի. Կարմիր-բլուրը, Արինքերդը և հատկապես Արմավիրը, որոնց ամայության մասին իբր խոսում են ուրարտական տեքստերը, հենց թեկուղ իրենց բնական դիրքով չէին կարող չգրավել ամենից առաջ ուրարտացիներին նախորդող բնակիչներին:

Մեր կարծիքով այդ արտահայտությունը կարիք է զգում հետագա ճշտման և այդ հարցում թերևս պետք է օգնեն պեղումներով ձևաք բերվող նոր նյութերը, ինչպես և, հատկապես, Փեշիշգյուլի արձանագրության տեքստը, որ qulđini, suli բառերը մի փոքր այլ կապակցությամբ են հանդես գալիս (BДН, № 268, 6—7, 12—15):

Վերևում՝ բերդի և susi տաճարի հետ կարևոր շենք համարեցինք նաև ari կոչվող շենքը, որ երկու անգամ է կառուցվել Արինքերդում: Ari-ն ուրարտագիտության մեջ թարգմանվել է հատկապես բերդ իմաստով: Դեռևս 1948 թվականին մեր դիսերտացիոն աշխատության մեջ, ելնելով միայն լեզվական տվյալներից մերժել ենք այդ թարգմանության հնարավորությունը¹. այդ մասին ավելի որոշակի խոսել ենք նաև 1950 թ. հայտնաբերված արինքերդյան արձանագրությունների առթիվ տպված մեր հոդվածում². ուստի լիովին համաձայն ենք Գ. Մելիքիշվիլու հետ:

Պրոֆ. Գ. Մելիքիշվիլին դրա փոխարեն առաջարկում է իր՝ «Հացահատիկի պահեստ, ամբար» թարգմանությունը, հիմք ընդունելով, որ kapi-ն միայն հացահատիկային չափի իմաստ ունի: Այդ թարգմանությունը թեև ճշմարտանման է, սակայն անսխալի չէ հետևյալ պատճառներով:

Ինչպես հայտնի է, ari շենքերին նվիրված են հատուկ արձանագրություններ, և բնորոշ է, որ տեքստի մեջ բացի ari-ից, որ առանց որևէ բացառության կիրառվում է suu-ni բայի հետ, ուրիշ որևէ օբյեկտ չի հիշատակվում. բացի այդ ari-ն զրեթե միշտ միևնույն ստանդարտ կապակցությամբ է հանդիպում:

Այս բոլորը անշուշտ պատահական չէ. ուրարտական թագավորները ari-ին նվիրելով հատուկ արձանագրություններ, ըստ երևույթին, այդ ձևով

ներսում ձեռնարկներ չինարարական ծավալուն աշխատանք. հավանաբար հենց այդ առաջնակարգ ռազմական կառուցումների շարքին է պատկանում էրեբունին, որը և տարեգրության մեջ բավական վաղ է հիշատակվում: Այն մեր կարծիքով, կառուցված է հատկապես Սեանի լեռնաբնակ ցեղերից պաշտպանվելու համար. խորխորյան տարեգրի երկրորդ սյունակը պատմում է Արգիշտու արշավանքի մասին՝ դեպի էրիուևի և Կիեխուևի (Քեղունի), որից հետո՝ հաղորդում է էրեբունի բաղաբի կառուցման փաստը:

¹ Պատմական Արմավիրը ըստ ուրարտական արձանագրությունների, 1948, էջ 120—121:

² Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 8, էջ 99 (ոուսերեն ամփոփագիրը):

³ BДН, 1951, № 4, էջ 25:

ընդգծել են նրա կարևորությունը կրոնական կամ, որ մեզ ավելի հախճախական է թվում, ազգական առումով¹:

Կարմիր-բլուրի նյութերը ցույց են տալիս, որ հացահատիկի պահեստները շատ չեն տարբերվել զինու մասնաններից. հացահատիկը մեծ մասամբ պահվել է խոշոր կտրասների մեջ², որոնց վրա, սակայն kapi հացահատիկի չափը բացակայում է. հատուկ պատրաստված հացահատիկային պահեստները կարմիր-բլուրում իրենց ծավալով, ինչպես նշում է Բ. Ի. Պիտարովսկին, աչնճան էլ մեծ չեն³, մանավանդ մասնանների համեմատությամբ. բացի այդ, նախկինում այդ ամրարներին, մեզ թվում է, թե՛ նրանց կառուցումը հազորդող տեքստը չպետք է պահանջեր ինչ-որ հատուկ բայ (su-u-ni), այլ՝ երբեմն կարող էր արտահայտվել zadu-ni կամ sidistu-ni (կառուցել) բայերով. այդ իմաստով հետաքրքրական է, որ զինու մասնանի կառուցման մասին հազորդող միակ արձանագրությունը (BDH, № 79)⁴ կառուցվող օբյեկտի հետ կիրառել է zadu-ni բայը. նույն տեքստում ղուգակցվում է նաև բերդի կառուցման փաստը:

Ինչպես տեսանք՝ կարմիր-բլուրի ամրարները հիմք չեն տալիս արդարացնելու ուրարտական թագավորների հատուկ վերարկումները՝ arı շենքերի նկատմամբ: Մյուս կողմից՝ չի բացատրվում, որ kapi-ն միաժամանակ կարող էր տարածական չափ լինել⁵, ինչպես այդ տեսնում ենք հացահատիկային չափերի մեջ՝ Արեկեթի (և՛ հին, և՛ նոր) տարբեր ժողովուրդների մոտ, օրինակ՝ գրիվ, արդու, խալիար, սոմար և այլն:

Բացի այդ՝ բոլորից, տեքստերի ուսումնասիրությունը պարզում է, որ այդ շենքեր բացակայում է Արգիշտի Ա-ին նախորդող տեքստերում. ստացվում է այն տպավորությունը, որ մինչև Արգիշտի Ա-ը Ուրարտում հացահատիկային պահեստներ չեն կառուցվել: Կարելի է ենթադրել, թե՛ նման բովանդակությամբ արձանագրությունն այն շրջանից ուղղակի մեզ չի հասել, սակայն հազիվ թե պատահականություն լինի այն, որ Արգիշտու, Սարգուրի անունով անհամեմատ փոքրածիվ շինարարական տեքստերից մի քանի արձանագրություն (հինգ) հասնեին այդ նույն բովանդակությամբ, Ռուսա 3-ի հատուկենտ տեքստերում հանգիպել arı-ն, իսկ Մենուայի անհամեմատ բազմաթիվ ու բազմազան տեքստերում չգտնվել arı-ի շինարարությունը հազորդող գոնե մեկ հատ տեքստ:

Կարելի է ենթադրել նաև, թե՛ այդ տերմինը տեղական բնույթ ունի և ուրարտացիք փոխառել են այն Արարատյան դաշտի բնակիչներից, սակայն չիշխալ բառը հանգիպում է Արգիշտի Ա-ի մի արձանագրության մեջ, որը գտնվել է Վանում, էնգուսներ գյուղում. հազիվ թե Արարատյան դաշտում հայտնաբերված arı տերմինով արձանագրությունները ավելի հին լինեն, քան Վանի վերահիշխալ արձանագրությունը:

¹ Արգյոր այդ arı-ն ազգական նպատակով բարձր մի զիտակետ չէ, կամ՝ ղուցե այն արտահայտում է ուրարտական զիկուրատ նշանակող բառը:

² Տե՛ս Բ. Пигоревский, История и культура Урарту, 1911, էջ 151:

³ Նույն տեղում, էջ 174, 198:

⁴ Հենց այս տեքստն է հիմք ծառայել Գ. Մելիքիշվիլու՝ «ամբար» թարգմանության համար:

⁵ Տե՛ս Բ. Пигоревский, История и культура Урарту, 1911, էջ 202:

Այս ամենը և այն, որ համապատասխան արձանագրությունները գտնվել են զլխավորապես այն վայրերում, ուր կան ուրարտական բերդեր (Արմավիր, Արինքերդ, Պատնոց և այլն), նաև Սարիղամիշի ուղղական բնույթի տեքստը, ուր 'ari-ն հիշատակվում է Ախուրյան և Աշտուխինի քաղաքների զրավման փաստի հետ, մեր նախորդ փաստաթղթերի հետ միասին՝ իրավունք են տալիս մեզ ասելու, որ 'ari-ն, ըստ երևույթին, ավելի ուղղական նպատակի ծառայող մի կարևոր օբյեկտ պետք է լինի (բերդի հետ կապված), քան՝ տնտեսական, և, թերևս, պատահական չէ, որ այն առաջին անգամ հանդիպում է ուրարտական մեծ նվաճող Արգիշտի Ա-ի տեքստերում¹:

Հայտնի է, որ Արինքերդում կառուցված 'ari-ները իրենց չափերով տարբեր են՝ մոտավորապես 1:2 հարաբերությամբ (5100:10100 kapl). գուցե Արինքերդի հետագա պեղումների ճարտարապետական չափումները պարզեն հիշյալ շենքի բովանդակությունը:

Այդպիսով, Արինքերդի պեղումները, հատկապես 1950 և 1956² թթ. հայտնաբերված սեպագիր արձանագրությունները, ինչպես հնագիտական նոր նյութերը կարևոր ներդրում են ուրարտագիտության մեջ: Դրանք ոչ միայն որոշակի պարզություն են մտցնում մի շարք հարցերում, այլև հիմք են տալիս նոր հարցադրումների: Այսպես, օրինակ՝ նայելով նոր նյութերին, մենք ավելի ենք համոզվում մեր այն ենթադրության մեջ, որ 8-րդ դարի (մ. թ. ա.) կենտրոնները՝ բերդ-քաղաք էրերուցին (Արինքերդը) կամ Արգիշտիխինի (Արմավիր), հազիվ թե 7-րդ դարում այնքան կորցրած լինեին իրենց կարևորությունը, որ կարիք լիներ այնտեղից իրենք անգամ տեղափոխելու Թեյշեբայինի (Կարմիր-բլուր), ինչպես ենթադրում է Բ. Պիոտրովսկին³. Էրերունի բերդը հիշատակող նյութերը կամ պահվել են Թեյշեբայինի քաղաքում, հավանաբար որպես էրերունիին ենթակա պահեստ-քաղաքում, կամ՝ տեղափոխման այլ պատճառներ են ունեցել, ինչպես ճիշտ դիտում է Գ. Մելիքիշվիլին, Բ. Պիոտրովսկու հաշվետվությունների առթիվ գրած իր գրախոսականում⁴:

Արինքերդի պեղումները, հատկապես վերը նշված արձանագրություններն ու արձանագրական նյութը օգնելու են նաև ուրարտական ու հայկական կուլտուրաների միջև եղած կապերի պարզաբանմանը. մ. թ. ա. 5-րդ դարի դրամների (և այլ նյութերի, որոնք դեռ ուսումնասիրվում են) գյուտը՝ 8-րդ դարում կառուցված ուրարտական տաճարի ներսում պարզ ապացույց է այն բանի, որ էրերունի բերդ-քաղաքը, պետք է ենթադրել նաև՝ Արգիշտիխինի-

¹ Պատմաբան Մ. Հասրաթյանը մեր այս զեկուցման առթիվ ունեցած իր ելույթում հնարավոր համարեց այն թարգմանել թերևս պարսիսկ իմաստով. նման ենթադրությունը արգելք է հանդիսանում 'ari-ի հետ երբեմն կիրառվող ուն (E) գետերմինատիվը:

² 1957 թ. օգոստոսի 1-ին հայտնաբերվեց ևս մի արձանագրություն (Արգիշտի Ա), որը հաղորդում է E. GAL-ի (բերդի?) կառուցման մասին: Հուսով ենք, որ այս տարվա մեր պեղումները վերջնականապես կսպարդեն ուրարտական E. GAL գաղափարագրի բովանդակությունը:

³ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, 1950, էջ 98, II, 1952, էջ 8—9: Այս առթիվ տե՛ս Մարգարիտ Իսրայելյան. Կարմիր-բլուրի նորագյուտ արձանագրությունները (Ն. Մառի անվան կարիքների աշխատություններ, № 2, 1947, էջ 232): Պատմական Արմավիրը ըստ ուրարտական արձանագրությունների (դիսերտացիա), 1948, էջ 128—130:

⁴ ВДИ, 1953, № 3, էջ 111:

լին (Արմավիրը) ոչ միայն մ. թ. ա. 7-րդ դարում, այլև Ուրարտուի անկումից հետո, երկար ժամանակ շարունակել են իրենց գոյությունը ու, անշուշտ, պահպանել իրենց կարևոր ռազմա-ստրատեգիական ու վարչա-տնտեսական նշանակությունը:

Այս հանգամանքը մի ավելորդ կոլան է հանդիսանում՝ երևան տեղանվան մեր մեկնարանման համար: Նոր նյութերի համաձայն էրեբունիում, անշուշտ նաև Արդիշտիխինիլիում¹ կյանքը տեսնել է, համեմատյալ դեպ, մինչև մեր թվ. ա. 5—4-րդ դարը, այսինքն մինչև հալ ժողովրդի լիակատար կազմավորումն ու ստաջին պետականությունը, և իհարկե, բնավ պատահական չէ, որ Երվանդյանների թագավորանիստ քաղաքը կոչվի Արմավիրը, իսկ երևան բառի սերումը ուրարտական էրեբունի¹ բերդանունից, նշանակում է, որ այսօրվա Մոլիտական Հայաստանի բոլորովին երիտասարդ մայրաքաղաք երևանը իր հիմքում, անկասկած, ունի մոտ երեք հազար տարվա անընդհատ պատմություն:

¹ Ի դեպ, այս անունը սովորաբար (իսկ սկզբում զրեթե բոլոր մասնագետների կողմից) տառադարձվում էր ԼԵ-ՐԱ-ՈՒ ձևով, որ մենք հենց սկզբից մերժել ենք և միշտ տառադարձել ենք Erbuni || Erbuni ձևով, ելնելով մեր կողմից դիտված հնչյունական այն օրինաչափությունից, որ Ե. 1 հնչյուններին հաջորդող բաղաձայնը ուրարտական բառարմատներում սովորաբար ձայնեո է լինում: Հենց այդ էլ հիմք է տվել մեզ ենթադրելու, որ Երևան տեղանունը սերվել է Er-(e)-buni-ից: Կան անտեղյակ մարդիկ, որոնք զրուծ են ԼԵ-ՐԱ-ՈՒ և միաժամանակ հնարավոր են համարում երևան բառի վերահիշյալ բացատրությունը, չիմանալով, որ ուրարտական ր-ն հայերենում W չի կարող տալ (տես *И. М. Лосева, Советское востоковедение, 1955, № 3, էջ 150*): Միայն վերջերս պրոֆ. Ի. Պիակոնովը իր մի հոդվածում իրավամբ առաջարկում է Erbuni տառադարձումը (*ВДИ, 1956, № 2, էջ 62*) և այն համեմատում է երևան անվան հետ: